արտաքոյ կարգի սէրը՝ զոր կը ցուցնեն փարփարները իրենց ձագերուն վրայ։ Անոնք երբեմն իրենց ձագերը հետերնին առած լճակի վրայ շրջագայութեան կ'ելլեն, անոնց լողալ և ինքն իրեն կերակուր հայթհայթել կը սորվեցնեն. և երբ չափահաս ըլլան՝ կը թողուն զանոնք և երկրորդ թխսի կը նստին։ Եթէ այս վերջին թխսումն ալ յաջող ելք ունենայ՝ զուարճալի և միանգամայն յուզումնալից տեսարաններու արժանի կ'ըլլանք։

Առջի անգամ որ նորածինները իրենց ծնողաց հետ պտոյտի ելլեն՝ անոնց երէց եղբայրները ընդառաջ կ'երթան և ուրախութեան ամենամեծ նշաններով կ'ընդունին, մեծ խանդաղատանքով զանոնք կը շրջապատեն ու այնպէս կրկին պտոյտնին կը շարունակեն։ Իսկ ծնողքն անոնց ետևէն մայրական գուրգուրանքով ամէն ջանք կ'ընեն որ զանոնք աչքէ չվրիպեցնեն։ Երբ ճամբան յանկարծ թշնամի մը հանդիպի՝ մեծագոյնները — այլ եւս փորձ՝ կեանքի պայքարներուն — փոքրները կը զգուշացնեն և զանոնք բարձր խոտերու մէջ կը դրկեն։

Թռչուններէն ոմանց ձագերը փրկելու հնարքը մարդս կը հիացնէ, իսկ այլոց վարպետութիւնը՝ ծիծաղը կը շարժէ։

Քիչ վերը յիշած Ոստայնանկները, իրենց ձագերը օձերու՝ միակ և ոխերիմ թշնամւոյն յարձակումէն ապահովցնելու համար, բոյներնին միմոսենիներու վրայ կը շինեն, որոնք ողորկ և սահուն ըլլալուն պատճառաւ, օձերը անոնց վրայ չեն կրնար բարձրանալ։

Իսկ Ջրակաքաւը, Ջայլամը, Հասարակ կաքաւն են. երբ իրենց ձագերը վտանգի մէջ տեսնեն, իսկոյն ողբական ձայներ հանելով վար կ'իյնան, իբր թէ վիրաւորուած ըլլային։ Զայն տեսնելով թշնամին՝ փութով ձագերը կը թողու ու մօրը վրայ կը դիմէ. իսկ իմաստուն մայրը, դեռ կաղութիւն կեղծելով, կամաց կամաց կը հեռանայ, և երբ այլևս ձագերը ապահով տեսնէ՝ ակնթարթի մը մէջ իր թևերուն ոյժ մը տալով աներևոյթ կ'ըլլայ։

(*Շարունակելի*) Հ. Ս. ՖԵՐԱՀԵԱՆ

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ․ — Ի Ս․ ՂԱԶԱՐ

(*Շար. տես Բազմ.* 1924, *էջ* 317)

ՁԹ.

Պելկրատու Մխիթարեան առաքելութեան երրորդ առաջնորդն է — յետ Հ. Միքայէլ Սեբաստացւոյ — Հ. Յակոբ Կարնեցի, որ կը ձեռնարկէ իր պաշտօնին՝ 1739 *Յուլիսին։*

Ինքն ևս կը սկսի մտնել մեր Նամակագիրներու կարգին մէջ՝ տալով հետևեալ երկու թուղթերը, որոնք կարևոր տեղեկութիւններ են Օսմանցւոց և Աւստրիացւոց միջև տեղի ունեցած պատերազմին շուրջ։

digitised by A.R.A.R.@

Գերապայծառ և գերայարգ Աբրահամ մերում տեառն տեառն Մխիթարայ վարդապետի

. . . . յուլիսի երկուսն յելինք ի Վենայու։ 12 զօլթայ խոստացանք նաւավարին. զի պատահմամբ մին փոքրաւոր հետս գտուաւ, որ նամսային լեզուն և տանկէվար լաւ գիտէր. այլ ևս ճանապարհին աւազակք եկին ի նաւն մեր ահացուցանելով զմեզ, բայց ինաս ոչ ետուն. միայն հացերս և գինին առին. ապա զկնի մեր եկող նաւին ինաս չորս ձ դռուշ հաստուցին, և միշի մարդկանց նեղութիւն ետուն. յուլիսի 21 հազիւ հասաք բելըրդատ... երեքշաբթի մտի ի բէլըրդատ. հետևեալ չորեքշաբթին սկսան պատերազմիլ ընդ տաճկաց. բայց յաջողումն ոչ եղև սոցա. այսօր երեք օր է որ այսքան հարիւրաւոր վիրաւորեալ գան ի քաղաք. տեսանելով զսոսա ողորմելի գալարի զաղիս մեր. բայց թէ որքան մեռեալ են ներ պատերազմին ոչ է յայտ. այլ ևս երեք սէհէթ մերձեցեալ է քաղաքիս, այսինքն տաճիկն. վասն այսորիկ մեծ ահ և երկիւղի միշի է քաղաքս...։

Գերյարգութեան քում մեամ
Պատրաստական նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ

Յամի տեառն 1739
յուլիսի 24
[Պելկրատ]

Ղ.

Գերապայծառի և գերայարգ Աբրահամ մերում տեառն տեառն Մխիթարայ վրդ.ի

. . . . տեղիս ահարկութիւնն օր ըստ օրէ բազմանայ, զի ցերեկ և գիշեր անդադար ջանան թէ բերքն պաշարել այնքան սաստիկ թափին գուլիլուլէն, և ղումպարան թափեն ներ բերքին, որ ոչ կարեմք մերձ եղեալ եկեղեցին գնալ, կամ գրսի դուռն նայիլ։... Դարձեալ քաղաքապետն հրամայեաց թէ որքան կին կայ ներ քաղաքիս՝ բոլորն թող ելանեն, վասն այն բազմութեամբ գնացին վարատին. ևս բազում այր մարդիկք գնացին. մին քանի մարդ մնաց մեր ազգէն, այնք զոլս տուն ունին, զի քաղաքապետն ասաց. Ով որ գնա, տունն և ապրանքն ոչընչանալոց է, այլ իւրեան ոչ տանք։ Դարձեալ երկիւղ ունիմք թէ վարիշն առնեն այլազգն, յայնժամ ժողովին ներսի բերրն. բայց ներսի բերրն բնակիլն առաւել դժուար է, քանզի այնքան կրակ թափելոց են անհաւատքն. ով է որ ապրելոց է...։

Նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ ողորմելի

1739
Օգոստոսի 7
[Պելկրատ]

ՂԱ.

Պոլսոյ հրեայք հրաման ստանալով կը մասնակցին Օսմանեան ցոյցերու՝ անոնց յաջողութեանց ի նպաստ։

Նամակագիրս է Մխիթարայ Միաբանութենէն Ջուղայեցի Հ. Պետրոս Մարտիկենց։

digitised by A.R.A.R.@

Աղնուամեծապայծառի և գերյարգելի գունդի
Հօրդ իմում Աբրամի

Բազմաւ կարօտական սիրով և ողջունիւ յայտ լիցի վերոյ գրեցելոյ Վեհանձնութեանդ... ուրախա[ցա]յ վասն առողջութեան վեհանձնութեանդ, ևս այլոց անձանց միաբանից, և վասն աշողութեանց չինուածոց եգիրեցմանց...։ Նոր էլչին յուլիսի 30 գնաց ի սարայն, և հինն ի յայլ տեղիս. ոմանք ասեն չուտով ելանէ և ոմանք ասեն մէկ ամսոյն ետ ելանէ.... ։... ահա ծանիր ի կողմանէ պատերազմին, զի տաճիկքն հրաման հանեալ հրէշիցն, զի ելեալ բազմութեամբ զամին ասացեն շրջագայելով յաստ և յանդ. նաև երբեմն երբեմն ի տօլմա պաղեան և ի յօթ մէյտանն գնացեալ բազմութիւնք տաճկաց և հրէշից ի գիշերին մինչև ի լոյս աղաղակէին, և խնդրէին զյաղթութիւն ինքեանց, և զկործանումն քրիստոնէից, և մինչև ցայսօր անդադար առնեն. այլ և մին անգամ ասելով թէ զթաբուռն նէմցէին առաք, և զինքեանս ձարթեցաք, և բազումս զերեցաք, վասն որոյ այնմ աւուր զբազումս ուրախութիւնս արարին, և զբազումս թօխս արձակեցին երեք անգամ, և ի միւսում աւուր լռեցին, որ պարտ էր երեք օր առնել..., և յայժմ ևս անդադար խօսին, և ասեն թէ յայսօր և կամ ի վաղիւն զպէլրդատ ֆէթ կանէմք, և կամ զբանալիքն առումք, և ապա զդրմվարն, և այսպէս զզնանգան բազումս բանս... ասեն...։

Նուաստագունեղ ծառայ
1739 *յօգոստոսի* 14 *Հայր Պետրոս վարդապետ*
[*կ. Պոլիս*]

ՂԲ.

Թուրք — Աւստրիական պատերազմը հետզհետէ ամենալուրջ երևոյթ մը կ'առնէ։ Մեր նամակագիրը համառօտիւ կը նկարագրէ Պելկրատի աղեխարշ պարպումը հայերէ և «Ֆռանկ»ներէ, ինչպէս նաև Հայոց Նաւուն մէջ պատահած խժդժութիւնը։

Գերապայծառ և գերայարգ Աբրա Հօրդ մեռում
տեառն տեառն Մխիթարայ վարդապետի

Բազմաւ յարգութեամբ յիսուսեան ողջունիւ յայտ լիցի տէրութեան քում, զի բէլլըրդատու եղեալ հայերն մեծ և փոքր, իւրեանց ապրանքն և կանայքն եդին ի նաւն, վասն գնալոյ ի վարատին. ևս ֆռանկաց կանայքն. քանզի քաղաքապետն այնպէս հրամայեաց, նաւերն գնացին գետով, անկարծակի գողք և աւազակ մտանեն մեր հայոց նաւն, մին մարդ կը սպանանեն, մին քանի մարդ այլ չափէն ի դուրս հարկանեն. կանանցն ևս հարկանեն, ասելով թէ փողերդ ինչ տեղ է բերէք յառաջ. վերջապէս թէ փող թէ ապրանք երեսուն քէսի վնաս եղև հայոց. ի կողմանէ պատերազմին, օր ըստ օրէ սաստկանայ, սկսան մեր հայերն և ֆռանկներն չուել. ևս ու ճանէզիզն խորհուրդ արարինք. առի փաշուլ ինձի և փոքրաւորն հետս. գնացինք զէմին. մին սայլ բռնեցինք. ճանապարհին մեծ երկիւղ կրեցինք՝ ի կողմանէ աւազակաց. բայց գոհանամ զաստուծոյ, ամենայնէ փրկեաց զմեզ. զկնի երկու աւուր ճէնէզիզն եկաւ. յոյժ սակաւ մարդ մնաց քաղաքին. կարծեմ եթէ հնար գտանեն՝ նոքա այլ գալոց են. վարատին մեծ դալապալըխ եղև. մին օտայ որ հազիւ երկու մարդ նստի, ամիսն երեք ոսկի քիրա. նա այլ դժուարաւ գտուի։ Այլ ևս թէ հայք և թէ լաթինք վարիչն թնակին. ոմանք չատըրով. այլ ևս մեծ կասկած գոյ թէ տաճիկն պաշարելոց է զքաղաքն. միայն ի ձեռին աստուծոյ մնացեալ է. տեղս քափու-

digitised by A.R.A.R.@

ճիներուն եկեղեցին պատարագիմ. խնդրեցի ի նոցանէ թէ միայն գիշերն մին տեղ տուէք ինձ վասն ննջելոյ. ասացին ոչ գոյ. ահ մին օտայ նստած ենք ես և փոքրաւորն. ամիսն երեք օսկի. աստուած օրհնէ այս տպան. եթէ սա ոչ լինէր, չափէն ի դուրս ողորմելի լինէի։ Զայսքան անձ անձին ի գլուխս մեր. բայց գապագայն ոչ գիտեմք թէ զինչ լինելոց է. քանզի ասեն թէ եթէ բելբրդատ տաճիկն առնու, վարատին կենալն հնար չէ...։

Գերյարգելութեան քում Ծառայ պատրաստական յամենայնի

1739 Օգոստոսի ԺԵ Նուաստագունեղ ծառայ

Ծրեցաւ ի Վարատին Հայր Յակոբ ողորմելի

ՂԳ.

Այլեւս Թուրք – Աւստրիական պատերազմի վերջաբանն է որ ինամքով կը նկարագրուի Հ. Թ. Ցովհաննիսեանի Նամակին մէջ։

Պատմութիւնը կ՝աւանդէ որ մեր Նամակագրին յիշատակած երկու աւստրիացի զօրավարները՝ Վալլիս և կոմս Նայպէրգ՝ կը բանտարկուին կայսեր հրամանաւ, որովհետև անմիջապէս զիջաներ էին Պելկրատու հաշտութեան համար Օսմանցւոց կողմանէ ղրուած անարգ պայմաններուն։

Նամակագիրս կու տայ նաև ուրիշ հետաքրքրական տեղեկութիւններ։

Օ[ր հնեալ]։ Յ[իսուս]։ Ք[րիստոս]։

Գերապայծառի և գերյարգելոյդ Տեառն Մխիթարայ Աբբայի Հօրդ մեր ի մեծաւ բնդանրական մեծաւ խոնարհութիւնք մատուցանեմ զորդիական ողջոյն և գինագանդութիւն։

. . . ի 7 սեպտեմբերի թագեցաք զեպիսկոպոսն ի պէլիկրատն, (որ այլով անուամբ Գարօլինայ կոչի) և անդ էր վերոգրեալ [Էլիզապէթապօլսեցի] Տէր Մինասն ևս...։ Ես թերեւս զկնի սակաւուց խնդրելոց եմ զՆերակոյսն, զի զվկայութիւն գրիցեն վասն իմ, բայց այժմ ոչ իշխեմ, զի են ի մեծի ալէկոծութեան չուրջ զDominiumին, քանզի որպէս ըստ առակին, Chi compra terra, compra guerra. այսպէս սոքա յորմէհետէ գնեցին զՏօմինիումն 101000 տուգաթով, ոչ ունին զխաղաղութիւն և զհանգիստ, այլ միշտ են ի խռովութիւնս և յաղմուկս։ Եւ ինքեանք վկայեն, թէ յառաջ քան զտիրանալ նոցա տօմինիումին, հանգիստ, ուրախ, և խաղաղ և միաբանք էին քաղաքացիքն, բայց այժմ ներհակն։ Այլ նորագոյն լուր ոչ գոյ աստ վասն անցելոց պատերազմաց, քանզի ասեն թէ խաղաղութիւն է. այսու զաւամբ, զի զպէլիկրատն աւերիցեն, և աւերեալ տայցեն ի ձեռս տաճկաց, և այսու պայմանաւ, զի զբերդն յաւիտեան ոչ չինիցեն տաճիկք, այլ այնպէս աւերեալ թողցեն. և այս զամս 26. ըստ ոմանց զամս 24, և ըստ այլոց զամս 28։ Եթէ այսպէս իցէ՝ ընդասակար խաղաղութիւն է, և մանաւանդ քայքայումն է քրիստոնէութեան քան թէ խաղաղութիւն։ Լուաք թէ Սրբազան Փափն և ամենայն եկեղեցականք, նաև ամենայն Electorք ոչ կամին ընդունիլ զորոգայթաւոր խաղաղութիւնս զայս, և ասեն թէ 2 կենէրալք, այսինքն Վալիսն և Նայպէրգն են ի բանտի ի Վիեննա, վասն կաշառակոծութեան. նաև 6 կենէրալք են ի կոստանդինուպոլիս ի պահեստի առ տաճիկսն, որպէս զի եթէ կայսրն մեր եղծիցէ զդաշինս կոնեցեալս՝ հատցեն զգլուխս նոցա. յանցեալ չաբաթու ասէին թէ զ6000 տաճիկս սրախողխող արարեալք իցեն ի Պէլկրատն, և զայլ անթիւ սուտս ասեն իբրև զնշմարիտս, և յետ սակաւուց այլք

digitised by A.R.A.R.@

ստէն զյառաջագոյն ասացեալսն։ ... Նաև ճանապարհքն փակք են դեռ ևս։ 7 ամիս է, յորմէ հետէ վաճառական ոմն Յովանէս Վասիլեան կոչեցեալ, յղեաց զկրտսեր եղբայրն իմ զՂուբուլն (որ է Ջատիկն) ի Վէննա մոմով, և ի հոկտեմբերի ամսոյն հազիւ կարաց մտանել ի Վէննա բազմաւ նեղութեամբ, և չատ ծախսիւք։ Միայն 5 անգամ և ի 5 տեղիս պահեալ է զզօնդումաձիա, այսինքն զՆազարէթ, թող զայլ աշխատանս և զծախս. և որպէս լուեալ եմ, միայն սակս մտանելոյ ի ներքս տուեալ է զ30 ոսկիս ունկարիս։ Եւ պատճառն է, զի զեաևս երկնչին ի մահտարաժամէ, զի տակաւին մնանին ի տեղիս տեղիս ի դրանսիլվանիա, նաև ի սիպին 12 տունս փակեալք են. բայց ի մեծ մաճարք ի բազում տեղիս մեռանին. Տէր Յիսուս զերծուսցէ զամենեսին։ ...

Մնամ պատրաստական ամենայնի

Նուաստագունեղ ծառայ
Հ. Թէոդորոս Յով[հ]աննիսեան
Կրօնաւոր ի կարգէ Ս. Ա. Աբբայի

Յամի Տեառն 1739
Նոյեմբերի 1
ի Կեռլայ

ՂԴ.

Համառօտ թուարկութիւն մը կը գտնենք՝ Պելկրատի ձախորդութեամբ Հայ ժողովրդի գլխուն հասած փորձանքներուն։

Գերապայծառի և գերայարգ Աբբա Հօրդ մերում
տեառն տեառն Մխիթարայ վարդապետի

... արդ Պէլրղատու որպիսութիւնն այսպէս եղև. այսինքն որքան եկեղեցւոյ անօթք գոյին թէ արծաթեղէնք [արծաթեղէնք] և թէ գրեանք բոլոր ազատեցաւ. ևս մեր խցին եղեալ գրեանքն բոլորն բերին վարատին. ապա զոմանս արտաքոց իրքն թնացին, այսինքն տօշկներ, բարձեր, վասն այնորիկ այժմ Վարատին ոչ ունելով զմահիճս, մին դատի մէջ յէրդ լցինք վասն ննջելոյ։ Այլ ևս մին փաւուլի մէջ եդինք զոմանս իրս, այսինքն մի քանի փոքր գրեանք, և արտաքոց բաներ. եղբայր Ջանէզիզն ասաց բերէք մեր մաղազան. և եդինք անդ. մին քանի անձինք իւրքն իւրեանց եդին անդ թէ ապահով տեղ է։ Եւ մեք որքան իր որ կարէինք տարանք Վարատին. զկնի 15 աւուր մեծ նեղութեան միջի որ անկաւ բէլըրղատ, սօլտաններն մաղազային երկաթէ դուռն կոտրեն որ ինչ մէջ գոյր թալանեն, և այսմ ժամանակի ես ծանր նեղութեան մէջ էի, որ ոչ կարացի փոքրաւորն յղել, վասն այն այն իրքն կորեան. դարձեալ ոմանք անձինք հայոց թնացին բէլրղատ և ոմանք տնով գնացին դմըշվար, և ոմանք պիտրին, և ոմանք գիւզօրէք. բայց մեծ մասն հայոց Վարատին է...։

Գերյարգելութեան քում թնամ պատրաստական յամենայն։

1739
Նոյեմբերի 7
[*Վարատին*]

Նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՑԵԱՆ

Շարունակելի

digitised by A.R.A.R.@